

դարձնելու իր սեփականը: Անհրաժեշտ է մեծացնել գործողությունների ծավալը և բոլոր ստորաբաժանումներին տալ նախաձեռնությամբ հանդես գալու և աչքի ընկնելու հնարավորություն, գուգակցելով այն աշխարհահայացքային համակարգի և փոխադասության հետ:

Անհրաժեշտ է ձգտել վերանորոգչական ղեկավարման, այսինքն՝ այնպիսի ղեկավարման, որը հիմնվում է մարդու պահանջումների և գոյության իմաստի վրա ու ստեղծում է կազմակերպչական նպատակաուղղվածություն: Վերանորոգիչ ղեկավարը պետք է զբաղվի նաև, այսպես ասած, «մանր-մունր» բաներով ևս, բայց այդ մանրուքները սովորական չեն: Այդ անելով նա կզբաղվի արժեքային դիրքորոշումների ու գործունեության իմաստների ստեղծմամբ: Այդպիսի ղեկավարը արժեքների տարածման և պահպանման հիմնական փորձագետն է:

Ժամանակի գործոնը, որի ազդեցությունն այժմ առանձնապես զգալի է, դրան ավելացրած անհրաժեշտ մակարդակով որոշումների կայացման պահանջը, ստիպում են վերանայել կառավարման շատ հարցեր: Այսպես, օրինակ, երբեմնի ճշմարիտ ասացվածքը «լավ է ուշ քան երբեք», այլևս արդիական չէ: Այսօր հարցը դրվում է այսպես. «կամ ժամանակին կամ էլ նպատակահարմար չէ»: Դրանք բոլորը նոր պահանջներ են առաջադրում ղեկավարի հատկանիշների ու նրա կազմակերպչական ընդունակությունների նկատմամբ:

Եվ հղում կատարելով վերոշարադրյալ մտքին, ուզում են նկատել, որ այսօր «աշխարհը» կարծես թե փոքրացել է և դրանում իրավամբ մեծացել է անհատի դերը: Ակնհայտ է, որ բազմաթիվ առանցքային խնդիրներ համակարգային ու յուրովի լուծումներ են պահանջում: Եվ այս համակարգային փոփոխություններում, ինչ խոսք, անհատը, և առավել ևս պրոֆեսիոնալ ղեկավարը կարող է հսկայական դերակատարում ունենալ:

ԱՐՏԱՇԵՍ ԵՂԻԱՋԱՐՈՎ

ՓՈԽԱՌՈՒԻ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Բանկի կողմից վարկի տրամադրումը բարդ և բազմաստիճան գործընթաց է: Ամբողջ աշխարհում վերջին տարիներին խստացել է վարկավորման մոտեցումը, ինչը կապված է վարկը չվերադարձնելու կամ ժամկետից ուշ մարելու ռիսկի հետ, որն իր հերթին կարող է դառնալ բանկի սնանկացման պատճառ: Վարկային գործառնությունների ռիսկը կրճատող գործոնների թվին են դասվում հաճախորդների խմբերի ուսումնասիրությունը, նրանց ֆինանսական դրության, ինչպես նաև այլ գործոնների վերլուծությունը, ինչը կատարվում է հաճախորդի կողմից բանկին վարկ ստանալու վերաբերյալ դիմում ներկայացնելուց և վարկային հայտ լրացնելուց անմիջապես հետո: Բանկի կողմից հաճախորդի ուսումնասիրությունը առևտրային բանկերի պրակտիկայում կոչվում է վարկային վերլուծություն: Սովորաբար, վարկային վերլուծություն իրականացվում է բանկի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների կողմից, իսկ որոշ բանկերում ձևավորվում են հատուկ բաժիններ, որոնք զբաղվում են բացառապես հաճախորդների վարկային հայտերի վերլուծությամբ և գործառնական ֆունկցիա չեն կատարում: Վերլուծությունների հիմնական նպատակն է օբյեկտիվորեն գնահատել հաճախորդի վճարունակությունը և վարկունակությունը:

Փոխառուի վարկունակության գնահատումը հիմնականում հիմնված է կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության հարաբերական ցուցանիշների վերլուծության վրա: Սակայն ելնելով Հայաստանի Հանրապետության տնտեսական պայմաններից և առանձնահատկություններից մեր կողմից կառաջադրվի փոխառուի վարկունակության գնահատման մի մոտեցում, որը հիմնված կլինի փոխառուի վարկունակության դասի վրա: Ըստ առաջադրվող այս մեթոդի ստորև ներկայացվող յուրաքանչյուր ցուցանիշներին կամրագրվի միավորների որոշակի քանակություն, որն է վերջո կրնութագրի փոխառուի վարկունակության դասը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս առավել ընդհանրական պատկեր ստանալ փոխառուի վարկունակության վերաբերյալ՝ առավելագույնս օգտագործելով մասնագիտական ունակությունները: Վերջինս առավել արդիական է ՀՀ տնտեսական պայմաններում, որտեղ միայն ֆինանսական հաշվետվությունների վերլուծության միջոցով փոխառուի վարկունակության մասին պատկերացումը ամբողջական չէ:

Ստորև ներկայացնենք մոտեցումը.

1. Փոխառուի ընդհանուր բնութագրերի ուսումնասիրում (հեղինակություն, գործունեության պատմություն, գործարար ակտիվության բնութագիր, արտադրանքի սպառողների և մատակարարների հետ կապերը, հիմնադիրների կազմը, նախկին վարկերի վերադարձելիությունը, փոխառուի գործունեության հասցեն և այլն)
2. Փոխառուի ֆինանսական վիճակի վերլուծություն /փոխառուի կողմից ծավալված գործունեության բոլոր ոլորտներում վարկի ստացման և մարման հնարավորությունը, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ վարկերի գծով, ոլորտի զարգացման հեռանկարները/:

Ներդրումային գործունեության արդյունավետության վերլուծություն /նախագծի շահութաբերությունը և արդյունավետությունը, կոնկրետ նախագծի գծով դրամական հոսքերի առկայությունը, փոխառուի պատրաստակամությունը վարկավորվող նախագծում օգտագործել սեփական կապիտալը, շուկայի բնութագիրը, ապրանքների իրացման պայմանները/:

Մինչ վարկի տրամադրման հարցի քննարկումը բանկի համապատասխան աշխատակիցները պետք է ընդհանուր պատկերացում կազմեն ներուժային փոխառուի վերաբերյալ: Առաջին հերթին դա վերաբերվում է

վերջինիս հեղինակությանը, ազնվությանը և պարկեշտությանը¹: Եթե փոխառում նախկինում հայտնի չէր, ապա նրա հետ առաջին հարցազրույցի ժամանակ անհրաժեշտ է համոզվել, որ նա վստահելի է, քաջատեղյակ է ֆինանսական գործառնություններից: Ուսկերի բացահայտումն իրականացվում է բանկի համապատասխան ծառայությունների կողմից /բանկի անվտանգության ու վարկավորման մասնագետների, ինչպես նաև և իրավախորհրդատուների/:

Ցուցանիշների համակարգ, որը բնութագրում է փոխառու ձեռնարկության վարկունակությունը.

Ընդհանուր իրացվելիության գործակից.

1-ից փոքր՝ 0 միավոր,

1 - 1,75՝ 5 միավոր,

1,75 - 2,5՝ 10 միավոր,

2,5-ից բարձր՝ 0 միավոր:

Բացարձակ իրացվելիության գործակից.

0,2-ից փոքր՝ 0 միավոր,

0,2 - 0,25՝ 10 միավոր,

0,25-ից բարձր՝ 10 միավոր:

Սեփական և փոխառու միջոցների հարաբերության գործակից.

1-ից բարձր՝ 15 միավոր,

1՝ 10 միավոր,

1-ից փոքր՝ 0 միավոր:

Ֆինանսական անկախության գործակից.

0,5-ից փոքր՝ 0 միավոր,

0,5՝ 5 միավոր,

1-ից բարձր՝ 10 միավոր:

Ֆինանսական մանևրման գործակից.

0,5-ից փոքր՝ 0 միավոր,

0,5՝ 5 միավոր,

1-ից բարձր՝ 10 միավոր:

Վնասների առկայություն.

Նախորդ և հաշվետու ժամանակաշրջաններում վնասով զուգորդվող գործունեություն - մինուս 15 միավոր,

վնասով զուգորդվող գործունեությունը վերջին երեք տարիների համար - մինուս 30 միավոր²:

Վարկի ժամկետայնություն.

մինչև 3 ամիս՝ 10 միավոր,

3 - 6 ամիս՝ 8 միավոր,

6 - 12 ամիս՝ 5 միավոր,

1 - 3 տարի՝ 3 միավոր,

3 տարուց ավել՝ 0 միավոր,

Մեզոնային մատակարարումից կախվածություն և դրա հետ կապված ապրանքների իրացման անկանոնություն՝ մինուս 10 միավոր:

Փոխառուի գործունեության ժամանակահատված.

5 տարուց ավել - 15 միավոր

3 - 5 տարի - 10 միավոր

1 - 3 տարի - 5 միավոր

1 տարուց պակաս - 0 միավոր

Փոխառուի գտնվելու վայրը.

Ելնելով վարկավորվող նախագծի իրագործման և փոխառուի տնտեսական գործունեության, այսինքն վարկի նպատակային օգտագործման ընթացքի նկատմամբ բանկի կողմից հսկողությունն իրականացնելու անհրաժեշտությունից՝ ցանկալի է, որ փոխառուն և բանկը գտնվեն միևնույն բնակավայրում (տարածաշրջանում).

բանկը և փոխառուն գտնվում են միևնույն բնակավայրում՝ 10 միավոր,

բանկը և փոխառուն գտնվում են միևնույն հարևան բնակավայրերում՝ 5 միավոր,

բանկը և փոխառուն գտնվում են միմյանցից հեռու գտնվող բնակավայրերում՝ 0 միավոր:

Փոխառուի բանկային ռեկվիզիտներ.

Վարկի տրամադրման հարցը քննարկելիս՝ անհրաժեշտ է նախապատվություն տալ մշտական փախառուներին, որոնք բանկում ունեն հաշվարկային, արժութային, դեպոզիտային և այլ հաշիվներ.

վարկը տրամադրվում է փոխառուին, որը հանդես է գալիս որպես բանկի մշտական հաճախորդ երկու տարուց ավելի՝ 15 միավոր,

վարկը տրամադրվում է փոխառուին, որը հանդես է գալիս որպես բանկի մշտական հաճախորդ մեկից երկու տարի՝ 10 միավոր,

վարկը տրամադրվում է փոխառուին, որը հանդես է գալիս որպես բանկի մշտական հաճախորդ մեկից տարուց քիչ կամ օգտվում է վերոնշյալ հաշիվների միայն մեկ տեսակից՝ 0 միավոր,

¹ "Банковское дело: управление и технологии" под ред. проф. А.М. Тавасиева, М.: "Юнити-Дана", 2001г.

² "Аудит и анализ финансовой отчетности предприятия" под ред. К.И. Люсимвасна, Алматы "Экономика", 2001г.

վարկը տրամադրվում է այլ բանկի հաճախորդին՝ մինուս 10 միավոր,

վարկը տրամադրվում է այլ բանկի հաճախորդին, որն ունի ժամկետանց պարտավորություններ՝ մինուս 20 միավոր,

վարկը տրամադրվում է այլ բանկի հաճախորդին, որն ունի երեք ամսից ավելի ժամկետանց պարտավորություններ՝ մինուս 30 միավոր:

Լավ վարկային պատմությունը.

Անհրաժեշտ է վերլուծել փոխառուի կողմից նախկինում ստացված վարկերի մարումը և աղբյուրները: Նախկինում ստացված վարկերը կարող էին մարվել ի հաշիվ շահույթի, այլ սեփական ֆինանսական ռեսուրսների կամ այլ վարկային միջոցների.

վարկերը և տոկոսադրույքները ժամանակին են մարվել, վերջինիս համար օգտագործվել են արտադրանքի իրացումից հասույթը, շահույթը կամ այլ սեփական ակտիվներ՝ 20 միավոր,

վարկերը և տոկոսադրույքները ժամանակին չեն մարվել, վերջիններիս մարման ժամկետը պարբերաբար երկարաձգվել է, բացի շահույթից օգտագործվել են մաս ակտիվների իրացումից միջոցներ, այդ թվում գրավները՝ մինուս 5 միավոր,

բացի վերջին կետում նշվածից, փոխառուն ներգրավել է այլ վարկային ռեսուրսներ և մարման հեռանկար չկա՝ մինուս 20 միավոր:

Դիվերսիֆիկացում

Գործնականում գործունեության բոլոր տեսակները ենթակա են կառուցվածքային տատանումներին, ուստի կազմակերպությունը պետք է տարբերակի (դիվերսիֆիկացնի) իր գործունեությունը:

Փոխառուի գործունեության բազմազանությունը կարող է երաշխավորել շահույթի ստացման կայունությունը: Չվճարման ռիսկը նվազում է, քանի որ վարկավորվող նախագծի հետ կապված հնարավոր ծախսերի առաջացման ռեպրում վերջիններս կարող են փոխհատուցվել այլ աղբյուրներից: Այսինքն վարկային նախագծի իրականացումից շահույթի չստացման ռեպրում, փոխառուն հնարավորություն կունենա այն ստանալ իր այլ գործունեություններից՝ վարկի հետ կապված պարտավորությունները մարելու համար:

Առկա են տարբեր գործունեության տեսակներ՝ 10 միավոր,

գործունեության տարբերակումը բացակայում է՝ 0 միավոր:

Զեռնարկության կադրային ներուժ

Մինչ վարկի տրամադրումը անհրաժեշտ է պատկերացում ունենալ փոխառու կազմակերպության ղեկավար անձնակազմի, այդ թվում տնօրենի և գլխավոր հաշվապահի վերաբերյալ: Անհրաժեշտ է ստանալ տեղեկատվություն կրթության, նախկին գործունեության, աշխատանքային փորձի, ինչպես նաև ընկերության ընդհանուր աշխատակազմի ներուժի մասին:

Ընկերության ղեկավար պաշտոնները զբաղեցնում են ձեռնարկության գործունեությանը համապատասխան բարձրագույն կրթությամբ մասնագետներ կամ նրանք ունեն տնտեսագիտական կրթություն և համապատասխան աշխատանքային փորձ տվյալ ոլորտում, ձեռնարկությունն ունի որակյալ աշխատակազմ 10 միավոր,

ընկերության ղեկավար պաշտոնները զբաղեցնում են ցանկացած բարձրագույն կրթությամբ մասնագետներ կամ նրանք ունեն թերի տնտեսագիտական կրթություն և համապատասխան աշխատանքային փորձ տվյալ ոլորտում ամնշան է, ձեռնարկությունն ունի որակյալ աշխատակազմ՝ 5 միավոր,

ընկերության ղեկավար պաշտոնները զբաղեցնում են մասնագետներ, որոնք ունեն թերի տնտեսագիտական կրթություն և համապատասխան աշխատանքային փորձը տվյալ ոլորտում բացակայում է, ձեռնարկությունը չունի որակյալ աշխատակազմ՝ 0 միավոր:

Վարկավորման օբյեկտ

Վարկավորման օբյեկտի վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ վարկի տրամադրումը շրջանառու միջոցների համալրման նպատակով նորմալ երևույթ է, սակայն դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է դիտարկել նաև տվյալ գործունեության իրացվելիությունը: Ռիսկի մեծ աստիճան է պարունակում վարկերի տրամադրումը նոր ստեղծված ձեռնարկություններին և նախկինում ստանձնած փոխառությունների մարմանն ուղղված:

Վարկը վերցվում է շրջանառու միջոցների համալրման, արտադրության արդյունավետության բարձրացման, նոր արտադրատեսակների թողարկման նպատակով՝ 10 միավոր,

վարկը վերցվում է այլ բանկերից ստանձնած պարտավորությունների մարման և ծախսերի փոխհատուցման նպատակով՝ մինուս 40 միավոր:

Վարկի չափը և նախագծի արդյունավետ իրագործման հնարավորությունը

Վարկի չափը վերլուծելիս անհրաժեշտ է համոզվել, որ այն չի գերազանցում և ոչ էլ նվազեցնում է վարկի նկատմամբ պահանջը: Առաջին հանգամանքը պայմանավորված է փոխառուի ֆինանսական իրավիճակի և վարկի մարման հնարավորության հետ: Հաջորդը՝ միջոցների անբավարարության ռեպրում կարող են առաջանալ խնդիրներ կապված վարկավորվող նախագծի իրականացման հետ: Բացի այդ անհրաժեշտ է որոշել փոխառուի սեփական միջոցների կիրառումն այդ նախագծում և վարկի չափի ու իրացված արտադրանքի ծավալի հարաբերակցությունը:

Փոխառուի ընդհանուր պարտավորության և սեփական կապիտալի օպտիմալ հարաբերակցությունը պետք է համապատասխանի 70/30: Ներդրումային նախագծի համար փոխառուի սեփական համախառն ներդրումները, որոնք իրագործվում են, պետք է կազմեն նախագծի ընդհանուր արժեքի 30% - ից ոչ պակաս:

ձեռնարկության սեփական միջոցների չափը նշանակալիորեն գերազանցում է ներգրավված միջոցները, ինչպես նաև վարկի մեծությունը նկատելիորեն փոքր է իրացման ծավալներից, նախագծի արդյունավետ իրականացումը կարճ է վարկի ամբողջական մարման ժամանակահատվածից՝ 10 միավոր,

ձեռնարկության սեփական միջոցների չափը փոքր է ներգրավված միջոցներից, ինչպես նաև վարկի մեծությունը նկատելիորեն մեծ է իրացման ծավալներից, նախագծի արդյունավետ իրականացումն երկար է վարկի ամբողջական մարման ժամանակահատվածից՝ 0 միավոր:

Հաշվարկային ձևերի հետ կապված վարկային ռիսկ

Առևտրային բանկը հետաքրքրված է, որ փոխառուն կատարի ստանձնած պարտավորությունները:

Դրա հետ կապված վարկի տրամադրումը հաշվարկային փաստաթղթերի դիմաց հանդիսանում է վերահսկողության արդյունավետ միջոց: Եթե վարկային միջոցները փոխանցվում են փոխառուի հաշվարկային հաշվին, ապա բանկին բավականին դժվար է հետևել, թե ինչ նպատակով են դրանք օգտագործվում, մասնավորապես, երբ փոխառուն սպասարկվում է այլ բանկում:

վարկային միջոցները փոխանցվում են անմիջապես փոխառուի հաշվին՝ փաստացի մատակարարված ապրանքի դիմաց փոխառուի հաշվարկային փաստաթղթերի վճարման համար՝ 10 միավոր,

վարկային միջոցները փոխանցվում են մատակարարի հաշվին, պայմանագրերում նախատեսված է կանխավճար, իսկ բանկը հնարավորություն չունի վերահսկելու ապրանքի մատակարարումը՝ 5 միավոր, վարկային միջոցները փոխանցվում են փոխառուի հաշվարկային հաշվին, կամ պայմանագրում նախատեսված է կանխավճար, իսկ բանկը հնարավորություն չունի ամբողջությամբ վերահսկելու ապրանքի մատակարարումը՝ 0 միավոր:

Ռեսուրսների ապահովվածության գնահատականը

Սա ներառում է ձեռնարկության ապահովվածությունը շրջանառու միջոցներով, այսինքն՝ նրա ապահովվածությունը պատրաստի արտադրանքով: Ապահովվածությունը բնութագրող գործոնները առաջին հերթին հանդիսանում են մատակարարների և պատրաստի արտադրանքը սպառողների հետ որոշակիությունը՝ պայմանավորված մատակարարման չափի, ժամկետների և համալրվածության հետ, ինչպես նաև ձեռք բերման և իրացման պայմանագրերի առկայությունը՝

կայուն շուկա, իրականացվում է աշխատանք սպառման շուկայի ընդլայնման և ապրանքների ու հումքի ձեռք բերման ուղղությամբ, արտահանման մեծ ծավալ, մատակարարների և սպառողների հետ հարաբերությունների բարելավում, կնքված են վերջինների հետ պայմանագրեր, մշակված են մատակարարման ժամանակացույցեր, իրականացվում է սպառման շուկայի հետազոտություն՝ 10 միավոր,

կայուն շուկա, իրականացվում է աշխատանք սպառման շուկայի ընդլայնման և ապրանքների ու հումքի ձեռք բերման ուղղությամբ, արտահանման մեծ ծավալ, կնքված չեն մատակարարների և սպառողների հետ պայմանագրեր, մատակարարման ժամանակացույցեր մշակված են մասնակիորեն, իրականացվում է սպառման շուկայի հետազոտություն՝ 5 միավոր,

կնքված են մատակարարների և սպառողների հետ պայմանագրեր, սակայն մատակարարման ժամանակացույցեր մշակված չեն, չի իրականացվում սպառման շուկայի մարքեթինգային հետազոտություն՝ 0 միավոր:

Մարքեթինգ

Փոխառուն պետք է ունենա ձեռնարկության զարգացման պլան՝ կազմված մարքեթինգային հետազոտություններով: Իրականացվում է ակտիվ գործունեություն արտադրանքի պահանջարկի, ինչպես նաև մրցակիցների, շուկայում արտադրանքի առաջխաղացման հետազոտությունների ուղղությամբ, իրականացվում են տարբեր տիպի մարքեթինգային միջոցառումներ և գովազդ:

ձեռնարկությունում գոյություն ունի հատուկ ստորաբաժանում, որը զբաղվում է դրանով - 10 միավոր

իրականացվում է արտադրանքի պահանջարկի նկատմամբ հետազոտություն, ապրանքը գովազդվում է, սակայն բացակայում է մարքեթինգային բաժին՝ 5 միավոր,

այդ ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվում՝ 0 միավոր:

Պահանջ լրացուցիչ արտադրական հզորությունների նկատմամբ

Շատ հաճախ վարկավորվող նախագծի իրականացման ժամանակ փոխառուին անհրաժեշտ է բարելավել կամ ստեղծել նոր արտադրական հզորություններ: Դա կարող է հանգեցնել լրացուցիչ միջոցների շեղմանը, ինչպես նաև կարող են առաջանալ դժվարություններ նոր արտադրության կազմակերպման հետ:

նախագիծը չի պահանջում նոր հզորությունների ստեղծում, տեխնիկական վերազինում՝ 10 միավոր,

նախագիծը պահանջում է աննշան կապիտալ ներդրումներ տեխնիկական վերազինման համար՝ 0 միավոր,

նախագիծը պահանջում է նոր արտադրական հզորությունների ստեղծում՝ մինուս 10 միավոր:

Պահեստային շինությունների առկայություն և դրանց նկատմամբ պահանջ

Ձեռնարկությունը ունի սեփական պահեստային շինություն, լրացուցիչ շինությունների նկատմամբ պահանջ չկա, շինությունը համապատասխանում է նորմատիվ պահանջներին՝ 10 միավոր,

ձեռնարկությունը ունի սեփական պահեստային շինություն, սակայն ունի լրացուցիչ շինությունների նկատմամբ պահանջ՝ 5 միավոր,

Ձեռնարկությունը չունի պահեստային շինություն և ոչ էլ այն վարձակալվում է՝ 0 միավոր:

¹ "Анализ хозяйственной деятельности предприятия", Г.В. Саницкая, М.: "Инфра-М", 2002г.

Փոխառուի գնահատական՝ կախված նրա կանոնադրական հիմնադրամի հետ կանոնադրական հիմնադրամը փոքր է վարկի ընդհանուր գումարի 20%-ից՝ 0 միավոր, կազմում է վարկի 20 -50%-ը՝ 5 միավոր, կազմում է վարկի 50 -100%-ը՝ 10 միավոր:

Վերը նշված առանձին չափանիշների գնահատականների գումարի միջոցով տրվում է փոխառուի վարկունակության դասը: Ստորև բերվող աղյուսակում ներկայացնենք դասային բաժանման սահմանաչափերը՝

Աղյուսակ

Փոխառուի վարկունակության դասի որոշման աղյուսակ

Փոխառուի վարկունակության դասը	Միավորների ընդհանուր գումար
Ա դաս՝ վստահելի փոխառու	180 և ավելի
Բ դաս՝ աննշան ռիսկային փոխառու	140 – 180
Գ դաս՝ միջին ռիսկային փոխառու	100 – 139
Դ դաս՝ բարձր ռիսկային փոխառու	80 – 99
Ե դաս՝ լրիվ ռիսկային փոխառու	180 և ցածր

ՄԻՔԱՅԵԼ ԹԱՎԱԴՅԱՆ

ՀՊՀՀ դասախոս, տ.գ.թ., դոցենտ

ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից շուկայական տնտեսության զարգացման գործընթացը ենթադրում է աշխատանքի միջազգային բաժանման վրա հիմնված ապրանքների և ծառայությունների փոխշահավետ փոխանակություն: Ընդհանուր դրան ուժեղանում է ազգային տնտեսությունների փոխկապվածությունն ու փոխալսամանավորվածությունը: Աշխատանքի միջազգային բաժանումը բարիքների արտադրությունը տրոհելով բազմաթիվ մասնագիտացված ոլորտների, օբյեկտիվորեն անհրաժեշտ է դարձնում արտադրության սուբյեկտների տնտեսական փոխգործունեությունը տարբեր երկրների միջև: Ընդ որում, ինչքան ավելի է խորանում աշխատանքի միջազգային բաժանումը, այնքան ավելի է անխուսափելի դառնում ազգային տնտեսությունների (երկրների) փոխգործունեության պահանջը: Այդ պահանջը չի վերաբերվում միայն արտաքին առևտրական հարաբերություններին, այլ նաև կապիտալ ներդրումներին, դրամական միջոցներին և այլն:

Այսպիսով, աշխատանքի միջազգային բաժանման համակարգի մեջ ընդգրկված երկրների համագործակցության շնորհիվ ապրանքների, ծառայությունների, ֆինանսների միջազգային շուկաները սերտորեն միաձուլվում են միմյանց հետ և էապես ազդում տվյալ երկրի ընդհանուր զարգացվածության վրա: Վերջինիս ուսումնասիրությունների իրականացման համար կարևոր միջոց է համդիսանում վճարային հաշվեկշիռը:

Վճարային հաշվեկշիռը մի փաստաթուղթ է, որտեղ արտագոյվում են բոլոր վճարումները (ծախսերը) և մուտքերը (եկամուտները) արտաքին տնտեսական գործունեությունից որոշակի ժամանակահատվածի համար (ամիս, եռամսյակ, տարի):

Սահմանումից պարզ երևում է, որ վճարային հաշվեկշիռը արտացոլում է ապրանքների, ծառայությունների, եկամուտների, տրանսֆերտների և ֆինանսների հետ կատարվող արտաքին տնտեսական գործարքները, որոնք իրականացվում են տվյալ երկրի ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև որոշակի ժամանակահատվածում:

Վճարային հաշվեկշիռը արտացոլում է ոչ թե անհատական գործարքներ, այլ համախառն գործարքներ տվյալ երկրի և այլ երկրների միջև: Քանի որ վճարային հաշվեկշիռը արտացոլում է տվյալ երկրի վիճակը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, ուստի այն մակրոտնտեսական քաղաքականության մշակման կարևոր կողմնորոշիչ է դառնում: Բացի դրանից, այն մակրոտնտեսական վերլուծության և կանխատեսման գործիքներից մեկն է: Դրա օգնությամբ հնարավոր է դառնում պարզելու արտաքին առևտրի զարգացման վիճակը ընթացիկ տարում:

Այսպիսով, վճարային հաշվեկշիռը ունի բավականին բարդ բովանդակություն, որն էլ պայմանավորում է դրա վերաբերյալ տարբեր տնտեսագիտական տեսությունների գոյությունը: Դրանք էական դեր են խաղում վճարային հաշվեկշիռի կարգավորման գործում: Վճարային հաշվեկշիռի տեսությունները անցել են զարգացման երկար ճանապարհ: Այսպես, շուրջ 200 տարի՝ մինչև XX դարի 30-ական թվականները, տիրապետող է եղել վճարային հաշվեկշիռի ավտոմատորեն ինքնակարգավորման տեսությունը: Այդ տեսության հիմքերը մշակել են անգլիացի գիտնականներ Դ.Յունը և Դ.Ռիկարդոն: Համաձայն այդ տեսության՝ պասիվ վճարային հաշվեկշիռի դեպքում շրջանառության մեջ եղած ոսկյա փողերի քանակը նվազում է, և իջնում են գները այն երկրում, որտեղից ոսկին արտահանվել է: Արդյունքում բարձրանում է տվյալ երկրի ապրանքների մրցունակությունը, աճում է արտահանումը և դրանով իսկ ակտիվանում է երկրի միջազգային հաշվարկների հաշվեկշիռը: Մյուս կողմից էլ ոսկու հոսքը դեպի երկիր մեծացնում է շրջանառության մեջ եղած փողի քանակը, որն էլ ըստ փողի քանակային տեսության կողմնակիցների, հանգեցրել է գների աճին և խթանել առավել էժան արտասահմանյան ապրանքների ներմուծումը: Այսպիսով, ոսկու տարերային տեղափոխման և գների փոփոխության արդյունքում ակտիվ վճարային հաշվեկշիռը վերածվում է պասիվի: Այս տեսությունը գերիշխող է եղել ոսկու ստանդարտի դարաշրջանում: Ոսկու ստանդարտի վերացման հետ միասին այդ տեսությունն էլ պատմության գիրկն անցավ: Սակայն պետք է նշել, որ վերջին ժամանակները այդ տեսության նկատմամբ հետաքրքրությունը նորից ակտիվացել է: Եթե նախկին պայմաններում ավտոմատ կարգավորման դերը իր վրա էր վերցրել